7134

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 181 - 25

Նախաձեռնող՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում կրթահամալիրի կառուցում***
Շիրակի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 181 - 25

«30» հունիսի 2025թ.

Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը	Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Բավրա Բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) և նախագծային փաստաթղթի՝ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում նախատեսվում է կրթահամալիրի (հզորությունը՝ 144 աշակերտական տեղով երկհարկանի միջնակարգ դպրոց և 80 տեղով մանկապարտեզ) կառուցում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում՝ որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր՝ 08-026-0009-0059) պետական սեփականություն հանդիսացող 1,2 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Նախատեսվող գործունեության հասցեն է Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրի 2-րդ փողոց 6-10 հողամասում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում՝ որպես վերջնական արդյունք սեյսմակայուն դպրոցների շենքերի տեսակարար կշիռն ապահովելու նպատակով:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Բավրա բնակավայրի հյուսիս-արևելյան մասում՝ կառուցապատումից ազատ հողատարածքում: Հայցվող տարածքն ազատ է կառուցապատումից: Տարածքում ծառաթփային բուսականություն առկա չէ: Հողամասի հեռավորությունը հարևանությամբ գտնվող ազատ հողատարածքներից կազմում է 9-50 մ, ճանապարհից՝ 19-32 մ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան ճյուղավորման հարավային լանջերի ստորոտին հարող միջլեռնային փոքրաթեք հարթավայրի սահմաններում: Ռելիեֆի մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 2120.0 - 2125.0 մ սահմաններում: Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է նեոգենի հասակի հրաբխային հաստվածքով՝ ծածկված ժամանակակից գոյացումներով: Գրունտային ջրեր չեն բացահայտվել, գրունտային պայմանները, ըստ սեյսմիկ հատկությունների, 2-րդ կարգի են: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, բացակայում են: Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի՝ տարածքը գտնվում է 3-րդ գոտում /a=0.5g/:

Կրթահամալիրի կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերես – 1.203 հա (100 %),
- կառուցապատման մակերես – 2030.56 քմ (16.85 %),
- կանաչապատման մակերես – 5206.5 քմ (43.4 %),
- բացօդյա մարզահրապարակի մակերես - 1528.03 քմ,
- ճանապարհներ – 1176,44 քմ,
- արևային կայանի տեղադրման մակերես – 2088.47 քմ:

Կրթահամալիրի ծավալա-տարածական լուծումն իրենից ներկայացնում է երեք իրար կցված՝ երկհարկանի մասնաշենքեր: Տիպային դպրոցը հատակագծում ունի 41.45x38.2 մ չափեր: Դպրոցի կենտրոնական մուտքը կազմակերպված է գոյություն ունեցող ճանապարհի կողմից, տնտեսական բակի մուտքը՝ հիմնական մայրուղու կողմից՝ 2-րդ դարպասից:

Տարածքի հարավ-արևմտյան մասում տեղադրվելու են մանկապարտեզի խաղահրապարակները, հարավ-արևելյան հատվածում՝ սպորտ հրապարակը՝ դիտատեղերով:

Ընդհանուր դպրոցի տարածքը ցանկապատվելու է մետաղական ցանցով: Նախատեսվում է ճանապարհի ասֆալտապատում, մայթերի և սալվածքների սալարկում, բացօդյա խաղադաշտի և սպորտհրապարակի հատակների իրականացում՝ հատուկ խառնուրդով, ռետինե ծածկույթով և արհեստական խոտածածկույթով:

Դպրոցի տարածքում նախատեսվող ջերմոցն (32 մ^2) օգտագործվելու է բնագիտական առարկաների գործնական դասընթացների համար:

Էլեկտրամատակարարման և ջրամատակարարման և ջրահեռացման միացումներն իրականացվելու են նախատեսվող գործունեության համար տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան: Բնակավայրը գազամատակարարված չէ:

Կրթահամալիրի տարածքում տեղադրվելու է 400 կՎտ հզորության լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան: Ենթակայանն աշխատելու է չոր եղանակով, իսկ սպասարկումն իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից:

Նախագծով նախատեսվում է 149,6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում (2088.47 քմ): Տեղանքում հորիզոնական ճառագայթումը = 1337 կՎտ*ժ/մ է: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 272 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Ջրամատակարարման համակարգը սնվելու է նկուղային հարկում տեղադրվող ռեզերվուարներից, որոնց կից տեղադրվելու է պոմպային համակարգ: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսվում է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից և ջերմամեկուսացվելու են 10 մմ հաստության ռետինե

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

խողովակակտորներով: Տաք ջրամատակարարման համակարգը սնվելու է նկուղային հարկում նախատեսվող կաթսայատնից:

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Կոյուղագիծը միանալու է տարածքում կառուցվող կոյուղու մաքրման Tonac 100 սարքավորմանը (հզորությունը 3 լ/վրկ): Սարքավորումը կատարում է եռաստիճան մաքրում: Նախատեսվել է դրենաժային հորատանցք ավելցուկային ջրերի հեռացման համար:

Եղանակային տեղումներից առաջացող հոսքաջրերն ինքնահոս հավաքվելու և ուղղվելու են տարածքի հարավային հատվածում տեղադրվող դիտահոր, որտեղից հեռացվելու է դեպի ջրահեռացման առու:

Անձրևաջրերի բակային ցանցը նախատեսված է իրականացնել ինքնահոս՝ DN200-DN300, SN 8 պոլիէթիլենե (PE) ծալքավոր կոյուղու խողովակներով: Տարածքում նախատեսված անձրևընդունիչների միջոցով ջրերը հավաքվում են և ուղղվում տարածքի հարավային հատվածում նախատեսվող ԴՀ K2 - 16 դիտահոր, որտեղից հեռացվում դեպի ջրահեռացման առու:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված իրականացվելու են միջոցառումներ, այդ թվում՝ շենքի երեսպատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրում, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում և այլն: Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ (թեքահարթակներ, միջհարկային ամբարձիչ և այլն):

Կրթահամալիրն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման և հակահրդեհային համակարգերով, էվակուացիոն ուղիներով:

Շինարարական աշխատանքների տևողությունը կազմում է 24 ամիս կամ 624 օրացուցային օր:

Շինարարական մեքենաներից և մեխանիզմներից օգտագործվելու են աշտարակային կռունկ, ինքնաթափ ավտոմոբիլ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր, ձեռքի գործիքներ և այլն: Շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու են շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման բարձրորակ նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակում պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու է շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինություններ, ինչպես նաև՝ մեքենաների անիվների լվանալու հարթակ:

Նախագծի հողային աշխատանքներից առաջացող է 26113 մ³ հողային հանույթից հետլիցքը կազմում է 7000 մ³: Հետլիցքի համար նախատեսված հողային հանույթը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով: Մնացած վտանգավոր նյութերով չաղտոտված 19113 մ³ հողային հանույթը կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ տարածքում բացառելով կենցաղային աղբի կուտակումը և այրումը:

ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն ժամանակավոր կառույցների տեղադրմամբ՝ ապահովելով շինհրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները:

Ջուրն օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, անիվների լվացման և կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (47 մարդ), 8000 մ^2 ջրվող տարածքի և անիվների լվացման համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4672,62 մ^3/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման համապատասխան: Տարածքի շուրջ 43.4 %-ը (5227.4 քմ) նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխան ծառաբուսատեսակներով: Տնկվելու են թխկի սրատերև կարմիր (32 հատ), գնդաձև իլենի (54 հատ), բարդի արծաթափայլ (26 հատ), ցանվելու են սիզամարգի սերմեր: 7230 մ^3 բուսահողի հանումը, պահպանումը և օգտագործումը իրականացվելու է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կրթահամալիրի տարածքում տեղադրվելու են ջրի երկու ռեզերվուար, ամբարած ջուրն օգտագործվելու է դպրոցի կանչապատ գոտիների ոռոգման և հրդեհամարման կարիքների համար:

Հաշվետվությունում ներկայացվել են նախատեսվող գործունեության աշխատանքների ազդեցությունները շրջակա միջավայրի (մթնոլորտային օդ, հող, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) և մարդու առողջության վրա և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու կամ մեղմելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում՝ 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրական պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեության դիտարկվող տարածքը կառուցապատված չէ, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Շիրակի մարզպետարանը, Աշոցքի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աշոցք համայնքի Բավրա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են երկու հանրային լսումներ: Նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում բացառել հարակից տարածքով հոսող ջրային ռեսուրսի աղտոտումը:
3. Բացառել նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքները հարակից տարածքում գոյություն ունեցող ջրատարերի պահպանման գոտում, ինչպես նաև շինտեխնիկայի կայանումը տվյալ տարածքներում:
4. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Հաշվետվությամբ և նախագծային փաստաթղթով նշված կանաչապատման և բարեկարգման լուծումները՝ համաձայնեցված տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
5. Մշտադիտարկման արդյունքներով պայմանավորված՝ գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների ապրելավայրերի հայտնաբերման դեպքում առաջնորդվել գործող օրենսդրական պահանջներով:
6. Շինարարության և շահագործման փուլերում թափոնների կառավարումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով և համաձայնեցված տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
7. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված՝ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում կրթահամալիրի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան